ՄԱՐԴԸ

(Մամիա Գուրիելուց).

Ով էլ որ լինիս դու, իմ ընթերցող,
Կին, թէ մարդ և թէ անփորձ օրիորդ,
Մի խնդիր ունեմ, ապաչում եմ քեզ,
Կատարող լինիս նրա անյողդողդ։

Առաջին անգամ երբ ապրել սկսես
Եւ բաղդը ժպտայ անբաժան միշտ քեզ,
Աղաչում եմ ես, չը մոռնաս երբէք,
Որ դու այդպէս էլ դարձեալ սոսկ մարդ ես։

Հարուստ, իմաստուն, աշխատող, խելք,
Թէկուզ գեղեցիկ, անբիծ էլ լինես,
Երբէք չը մոռնաս, միշտ յիշիր մտօք,
Որ այդպիսով էլ դու էլի մարդ ես։

Ցանկալի տէր եղար անթիւ դանձերի
Եւ դու զօրաւոր մի թագաւոր ես.
Էլ աւելի ևս չը պէտք է մոռնաս,
Որ այդ փառքովդ էլի սոսկ մարդ ես։

Գուցէ խորթ եղար դու բաղդիդ համար,
Խոցոտեց սիրտդ, վիշտն ընկճում է քեզ.
Ո՜, չընկնես երբէք, կանգնիր, քաջացիր.
Ցիշիր անդադար, որ դու էլ մարդ ես։

Թող փոխուեն շուրջդ հանգամանքները,
Ամբոխի ձայնը խայթի, ճնշի քեզ.
Դարձեալ չը փոխուես, կը դայ ժամանակ
Եւ կը ճանաչեն, որ դու էլ մարդ ես։

Ճշմարտութիւնը կեանքիդ նպատակ,
Սիրել եղբօրդ պարտք համարիր քեզ.
Չը մոռանաս երբէք քո հայրենիքդ,
Որ ասեն, այո՛, դու ինչ որ մարդ ես։

Ե. ծ. վ. Մ.